Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 24-ի N 351-Ա
որոշման

«ՍԵՐԳԵՅ ԿԱՐԼԵՆԻ ՁԵՆԴԵՄՅԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ, Լոռու մարզի Վանաձոր քաղաքի, Տիգրան Մեծի 34 շենքի, թիվ 32 բնակարանի վերանորոգման աշխատանքների իրականացում, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի ծրագրի շահառու ընտանիքին բնակվել արժանապատիվ և բարեկեցիկ պայմաններում: Ծրագրի շահառու՝ Սերգեյ Կարլենի Ձենդեմյանը չունի մշտական աշխատանք, նրա ընտանիքը նպաստառու է, երեք անչափահաս դուստրերից երկուսը ունեն «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ, ինչպես նաև կինը՝ Հասմիկ Սերգեյի Պետրոսյանն ունի 3-րդ կարգի հաշմանդամություն: Շահառուի ընտանիքի բնակարանը խիստ անբարեկարգ է, հիգիենայի պայմաններից զուրկ, ընտանիքը բնակվում է առողջությանը վտանգ սպառնացող պայմաններում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Նիդեռլանդների «Մենսենքինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե. Նիդեռլանդեր, Spoorlaan 1a, 8071 BN Nunspeet)
4.	Ծրագիրը կատարողը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամ (իրավաբանական հասցե ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 24 շենք, բնակարան 30, ՀՎՀՀ՝ 00472741)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, սոցիալական աջակցության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	3,321,637 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի բնակիչ՝ Սերգեյ Կարլենի Ձենդեմյանը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի հուլիսի 01-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2020 թվականի հուլիսի 01-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Լոռու մարզի Վանաձոր քաղաքի, Տիգրան Մեծի 34 բնակարան 32 հասցեում գտնվող բնակարանի վերանորոգում՝ սենյակների, խոհանոցի, սանհանգույցի, պատշգամբի ներքին հարդարման աշխատանքների իրականացում, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների մոնտաժում, էլեկտրականության մոնտաժում 3,321,637 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամի և «Իրտիգ» ՍՊԸ միջև կնքվել է շինարարական կապալի մասին պայմանագիր, որով նախատեսվում է շահառուի բնակելի տանը, կապալառուի նյութերով և միջոցներով իրականացնել 3,321,637 ՀՀ դրամի վերոնորոգման աշխատանքներ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան, Լոռու մարզի Վանաձորի քաղաքի քաղաքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում «Մենսենքիդերեն» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ